h.1634343
11-09-2025թ.
Նախընտրած ծանուցման ձևը՝
Էլ.փոստի միջոցով

Հասցեատեր՝ *Լոռու մարզպետարան*

Դիմող՝ *ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ՌԱԴԻՈԿԱՅԱՆ*
Հասցե՝ *ԼՈՌԻ, 2001, ՎԱՆԱՁՈՐ,*
ՏԵՐՅԱՆ Փ., 6, 19
karinesimonyan1@gmail.com : 37499616961

ՀԱՐՑՈՒՄ

ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ խնդրում եմ տրամադրել տեղեկություններ.

Հարգելի պարոն Մկրտչյան, սեպտեմբերի 9-ին բավականին ընդլայնված կազմով հանդիպում եք անցկացրել իրավապահ համակարգի և պաշտպանական գերատեսչության Լոռու մարզային ստորաբաժանումների ղեկավարների, համայնքների ղեկավարների, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների հետ: Լրագրողներն այս հանդիպմանը ներկա չեն եղել: Համենայնդեպս մարզպետարանը հանդիպման մասին չի ծանուցել: Լրատվականից «Ազատությանն» ասացին, որ հանդիպումն աշխատանքային է եղել, ուստի լրագրողներին չեն ծանուցել:

1. Դուք իսկապես կարծում եք, որ սեպտեմբերի 9-ի հանդիպումն ու Ձեր ելույթը լուսաբանման ենթակա՞ չէին: Եթե այո, ապա ի՞նչ սկզբունքներից ելնելով:

2. Սա չի նշանակո՞ւմ արդյո՞ք, որ մարզպետարանի աշխատանքային գործունեությունը փակ է լրագրողների համար, լրագրողները հնարավորություն չեն ունենալու ներկա լինելու աշխատանքային հանդիպումներին, ինչը թափանցիկության սկզբունքի խախտում է:

3. Այստեղ թափանցիկության խնդիր չե՞ք տեսնում Դուք:

4. Արդյո՞ք հեղափոխական գաղափարներով իշխանության եկած ուժի համար ընդունելի է, որ նման ընդլայնված հանդիպմանը ներկա չեն լինում լրագրողները:

5. Աշխատանքային այս կարգը հենց Ձե՞ր որոշումն է, թե՞ կառավարության որևէ գերատեսչություն է նման որոշում կայացրել՝ փակ անել նման հանդիպումները:

Խնդրում եմ հարցերին պատասխանել հնարավորինս շուտ:

Պատրաստ եմ վճարել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված սահմանաչափը գերազանցող տեղեկության տրամադրման համար:

Դիմող՝

ԿԱՐԻՆԵ ՍԻՄՈՆՅԱՆ